ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2024 թվականի № 107-Ա

ՔՆՔՈՒՇ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին օրենքի» 12-րդ հոդվածի 17-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2024 թվականի փետրվարի 2-ի ուսումնասիրություն կատարելու մասին տեղեկանքը և *Քնքուշ Լևոնյանի*՝ 2024 թվականի փետրվարի 28-ի գրավոր բացատրությունը՝ **որոշում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները, վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Քնքուշ Ժորայի Լևոնյանի*** նկատմամբ կիրառել ***«նկատողություն»*** կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի մարտի 5
ք. Հրազդան